

տութիւնս աւելնայ և երախտագիտութեամբ սէրս : Եւ օրինակովս ուրիշներն ալ յորդորուն զինքը պաշտելու :

և ասանկով իրեն թագաւորութիւնը ընդարձակի, և անունը փառաւորութիւն :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿ ՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄ ՈՒԹԻՒՆ



Կոմիտաս :

ԿԻՐԱԶԱՆՑ մտաց տուրք է մարդկանց սորվեցընելը իրենց մտքին գաղափարները գիւրդին կերպով իրարու հաղորդել, ուսկից որ կախուած է մարդկային ընկերութեան յառաջագիմութիւնը : Եւ արդուս խօսքը հազիւ թէ պզտի տեղւոյ մը մէջ և քիչ մը ատեն միայն կրնայ զօրել. և որպէս զի ամէն տեղ լուի և յաւիտեան մնայ՝ պէտք է որ գիր անցուած ըլլայ. բայց գրուածքով ալ այնչափ տեւական և ընդարձակ ազդեցութիւն չէր կրնար ունենալ, թէ որ կարելի չըլլար ուղածներնուս չափ նոյն գրուածքին օրինակը շատցընել, որպէս զի քիչ ժամանակի մէջ և քիչ ստըկով նոյն մէկ զիրքը կարենան ամէնքը ձեռուընին ունենալ : Զին ատենները մարդիկ իրենց լեզուին բառերը կերպ կերպ ձևերու վերածե-

լով՝ մետաղներու վրայ կը փորէին, և ինչպէս որ Կիւերոն, Կոնստիլիանոս և սուրբն Հերոնիմոս կը վկայեն՝ ինչուան ան ատենները մտածեր են եղեր իւրաքանչիւր գրերը զատ զատ ձևացուցած՝ ետքը իրարու քով շարելով՝ տպագրել. բայց դեռ մէկն ալ ձեռք չէր վարկած աս գիւտին : Զինացիք տասներորդ դարէն ետքը կամ աւելի առաջ՝ սկսան տեսակ մը փորագրութիւն, գրքին ամէն մէկ երեսին համար զատ զատ միակտուր ու ամուր տախտակներ շինելով՝ անոնց վրայ ուղածնին կը փորէին, ասով գրերը առանց իրարմէ բաժնուելու հաստատուն կը մնային : Եւ յիշեմուտք ալ ժ. Դ դարուն վերջերը և ժ. Ե դարուն սկիզբները՝ նոյն կերպով սկսան խաղա-

լու թղթեր , պատկերներ հանդերձ իրենց համառօտ պատմութեամբը և ուրիշ պզտի գրքեր ժամերու ու դարոցներու գործածութեան համար տպել : Հոլանտացիք շատ ծաղկեցուցին ասարուեստս , բայց իրաւունք չունին պարծելու թէ Վալթերտիոս Վոստեր հարկեմին ըլլայ բուն տպագրութեան հնարողը . վասն զի ինքն ալ առջիններուն փորագրութեան կերպովը՝ սկսեր էր փայտի վրայ տպել իւրաքանչիւր տողերը զատ զատ :

Իսկ հիմակուան շարժուն ըսուած տպագրութիւնը 400 տարի է որ սկսեր է , և մարդկային մտաց և քաղաքակաւութեան յառաջադիմութեան մեծ պատճառ եղեր է : Իսարուեստիս գիւտը թէպէտ և ոմանք ուրիշի սեպեր են , բայց Վուլթեմպերկին ըլլալը հասարակաց կարծիքն է և տարակոյս չի վերցնէր :

Վուլթեմպերկ կամ Յովհաննէս Կէնսֆլայխ Սուլցելտիս Վուլթեմպերկ՝ ծնաւ Սայէնցաքաղաքը 1400^{ին} ատենները ազնուական ու հարուստ տնէ . տպագրութեան գիւտէն առաջ անցուցած կենացը վրայօք այսչափ գիտէնք որ 1424^{էն} վերջը Սթրազպուրկ կը բնակէր . և նոյն ատենները գրեր է իր մայրապետ քրոջը նամակ մը որ ետքը Ֆիշէր և Պոտման հրատարակեցին : 1430^{ին} իր ծնած քաղաքը՝ շարադրեց ան գիրքը թէ ազնուականք և ռամիկք ինչպէս իրարու հետ պիտի վարուին : 1434^{ին} երբոր ստիպուեր էր իր հայրենիքէն հեռանալ Սթրազպուրկի ծերակուտին կամքը կատարելու համար՝ իր պարտապաններուն մէկուն ներեց ու բանտէն խալըսեց : 1436^{ին} դարձեալ Սթրազպուրկ գտնուելով իր բարեկամներուն մէկ բանիին՝ նոր հնարած գիւտը հաղորդեց , որ կը կարծուի թէ շարժական գրերն ըլլան . հոն ընկերութիւն մը ժողվեց , որ իր հրաշալի գիւտը և գաղտնիքը՝ ի գործ դնեն . բայց աս ընկերութիւնը իրեն գլխու ցաւի պատ-

ճառ եղաւ . վասն զի 1439^{ին} Վուլթեմպերկի դէմ դատաստան բացին տասներեօթը վկայով . Վուլթեմպերկ խոստացեր էր արուեստին վրայօք վերաբերեալ գիտելիքներն իր ընկերներուն մեկնելու՝ և վերջը ծածուկ պահեր էր . և պարտաւորեցին որ Վուլթեմպերկ 100 ֆիորին հատուցանէ իր ընկերներուն : Վուլթեմպերկ թէպէտ կը տեսնէր որ ինչուան ան ատենը տրպագրութեան վրայօք ըրած փորձերովը իր բաղդը շատ չբանեցաւ , բայց ան տարակոյս ըլլալով՝ որ անկէց ետքը պիտի յաջողի և մեծ անուն պիտի հանէ , սկսաւ 1442^{էն} ինչուան 1445 ընկեր ժողվել , և նոյն տարին 1445^{ին} Սայէնցա դարձաւ . բայց որովհետեւ 10 տարի տպագրութեան առջի փորձերն Սթրազպուրկ քաղաքը ըրեր էր , ասով Սթրազպուրկ սեպուեցաւ առաջին տեղի տրպագրութեան :

Վուլթեմպերկ 1445^{ին} նորէն Սայէնցա դառնալով՝ ետեւէ եղաւ իր գիւտին արգելքներուն և դժուարութիւններուն դէմը առնելու . և տեսաւ որ շատ կարօտութիւն ունի ճարտար արհեստաւորի մը ընկերութեանը և քաղաքացւոց ստղկի ձեռնտուութեան . ուստի 1449^{ին} կամ 1450^{ին} Ֆուլթ կամ Ֆուսթ՝ անունով մէկու մը հետ միաբանելով՝ սկսաւ աստուածաշունչը տրպել՝ նոյն կերպով՝ ինչպէս որ Սթրազպուրկ փորձեր էր , այսինքն իւրաքանչիւր գրերը առանձին առանձին փորած փայտի կամ մետաղի մը վրայ կարգաւ շարելով . ասով թուղթ մը բան տպելու համար 9,000 գիր գործածեց , և չորս թղթով տետրակ մը տպելու համար 36,000 գիր , և աս սարսափելի ծախքը բոլորովին յուսահատեցուց աստուածաշունչին տպագրութիւնը , ուստի ստիպուեցաւ գիր թափել , և անանկով լմնցնել տպագրութիւնը :

Սայր գրեր փորագրելով գիր թափելն ալ ինքը Վուլթեմպերկ հնարեց . իսկ Պետրոս Էֆֆեր՝ միայն

1 Henne Gensfleisch Sulgeloch, zum Gutenberg.

1 Faust կամ Fust.

2 Scheffer.

կատարելագործեց . 1455^{ին} Վուլթեմ պերկին և Ֆուսթին մէջ դատաստան բացուելով՝ ընկերութիւննին քակուեցաւ . Ֆուսթ 2020 ֆիորին կը պահանջէր Վուլթեմպերկէն՝ դրամագլխոյն և տպագրութեան ուրիշ պիտոյիցը համար տուած ստրկին շահուն համար . վերջապէս վճռեցաւ որ Վուլթեմպերկ շահն ու դրամագլխոյն մէկ մասը վճարէ : Եւս դիպուածներովս յայտնի կ'երևնայ թէ այսպիսի գիւտեր հնարող երևելի մարդիկ որչափ խեղճութեանց մէջ ընկեր են . Վուլթեմպերկին ըրած բոլոր աշխատանացը վարձք՝ իրեն այսչափ տոյժ ու անհամար վիշտերն եղան , իսկ օգուտը՝ բոլոր հասարակաց :

Վուլթեմպերկ իր ընկերներէն զատուելով՝ 1456^{ին} իր ծախքովը՝ և Սայէնցա քաղաքին հոգաբարձուն օգնութեամբը նոր տպարան մը բացաւ և ան միջոցներուն որ իր առջի ընկերները Ֆուսթ ու Շէֆֆէր այլ և այլ գրքեր կը տպէին իրենց անուամբը , ինչպէս սաղմոսը 1450^{ին} , Վուլթեմպերկ ինքն ալ քանի մը գրքեր տպեց , և հիմա Վուլթեմպերկին տպածները մէկալ նոնցմէ զանազանելը շատ դժուար է , որովհետեւ գրքերուն ճակատը ընդհանրապէս ոչ թուական կը դնէին և ոչ ուրիշ նշան մը :

1462^{ին} Սայէնցա քաղաքը երբոր առնուեցաւ՝ Վուլթեմպերկի ընկերներն ալ հոլանտա , Վերմանիա , Իտալիա ցրուելով՝ տպագրութիւնը ան տեղուանքն ալ ծաղկեցուցին . վասն զի ինչուան անատենը Սայէնցա քաղաքէն զատ միայն Պամպերկ , Պազիլէա և հարլէմ քաղաքները տարածուած էր . իսկ Վուլթեմպերկին տպարանը դեռ բաց մնաց հոն , և ինքը 1463^{ին} Սայէնցա քաղաքին արքեպիսկոպոս կայսրընտրին՝ թոշակառու պալատականներէն մէկն էր . թէպէտ և կ'երևնայ թէ իր արուեստն ալ ձեռքէ չէր թողած :

Եւսպէս Վուլթեմպերկ իր հայրենեացը մէջ լըմընցուց հնարած ծանր և աշխատալի գործքը , երկար ու տաժա-

նելի փորձերէն ետեւ . բայց առջի քաշած նեղութեանցը փոխարէն շատ միաթարուեցաւ , տեսնելով որ այլ և այլ տեղուանք ետեւէ են իր արհեստը 'ի գործ դնելու . ինչպէս 1461^{ին} Պամպերկի մէջ , նոյն ատենները նաեւ Պազիլէայի մէջ . 1465^{ին} Վոլոնիայ և Սուպիաքոյի մէջ . 1467^{ին} Հոլլմի Լնքը կ'երևնայ թէ 1468^{ին} մեռած ըլլայ :

Իրմէ վերջն ալ տպագրութեան արուեստը մեծ յաջողութեամբ ծաղկեցաւ , անանկ որ 1501^{ին} առաջ 13,000 գործոց տպագրութիւններ եղան . և բոլոր Եւրոպայի մէջ սփռուած գրքերը 4,000,000 հատորէն աւելի էին . իսկ անկէ վերջը տպուած գրոց հաշուոյն մարդու խելք չհասնիր : Տպագրութիւնը գտնուելէն ետեւ արհեստ մը չեղաւ որ անոր նման երթալով ծաղկի . և որովհետեւ տպագրութիւնը մարդկային մտաց յառաջադիմութե ալ մեծ պատճառ եղաւ , արժանապէս Վուլթեմպերկ ալ օգտակար մարդկանց կարգին մէջ կը սեպուի :

Սայէնցա քաղաքին բնակիչքը ամէն հարիւր տարի մէկ մը մեծ հանդէս կը կատարեն 'ի պատիւ Վուլթեմպերկայ . ընկերութիւն մ'ալ հաստատեցին 1832^{ին} որ իրեն մեծ ու վիթխարի պըղծնէ արձան մը կանգնեն , և կանգնեցին 1836^{ին} լորվալտսէն մեծանուն արձանագործին առաջնորդութեամբը : Սթրազպուրկցիք ալ որ Վուլթեմպերկի պատկերը ժեղարուն մէջ քաշուած պահած ունէին իրենց թանգարանին մէջ , 1840^{ին} արձան մ'ալ կանգնեցին , որուն ստորագրութիւնը և նաւակատեաց հանդէսը յիշեր ենք ()րագրիս մէջ տպագրութեան գիւտին վրայ խօսած ատեննիս :